ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Տեքստիլ Փիփ ՍՊԸ-ն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/08 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
20	Ապրանքները պատրաստվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 20.12.2018թ. N 1517-Ա որոշմամբ հաստատված չափորոշիչներին և ձևերին (նկարներին) համապատասխան: Բաճկոն՝ հանովի ուսադիրներով (կանացի) (Ձև 7): Պատրաստվում է մուգ կապույտ կիսաբրդյա կտորից (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ2 խտությամբ, թույլատրելի շեղում՝ +, - 2%), բնական մետաքսե աստառով (8-C5-ԲՇ արտիկուլից մուգ կապույտ կտորից 100 գ/մ2 խտությամբ, թույլատրելի շեղում՝ +, - 2%), կրծքամասում սեղմոններով: Բաճկոնը առջևի մասում կոճկվում է ձախ կողմից, իսկ գոտեմասում՝ 55 սմ լայնքով ու 12-18 սմ երկարությամբ, ներկարված առանձգական ժապավենով: Թիկնամասի, լանջափեշերի կրծքամասով և թևքերի թեզանիքների կտրվածքների միացման տեղերով անցնում է 2,5 մմ լայնքով մուգ կարմիր երիզ (կանտ) (2581 արտիկուլի մահուդե կտորից): Բաճկոնի վրա ներկարված են կայծակնաճարմանդով կոճկվող 2 կողային գրպան, ծոցագրպաններ, որոնցից ձախը կոճկվող է: Բաճկոնի վրա տեղադրված են հանովի ուսադիրների համար նախատեսված 2-ական ամրակներ: Բաճկոնի օձիքը կանգուն է, մշակված է մեկ կտորից: Ձախ թևքին առկա է թևքանշան (Ձև 20), իսկ աջ թևքին ՀՀ դրոշ՝ նշված որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան: Նախքան բաճկոնների պատրաստումը բաճկոնների գունային գամման համաձայնեցվում է Գնորդի հետ: Բաճկոնների ամբողջ քանակը պետք է պատրաստվի միևնույն գործվածքից: Ընդ որում, նախապես (մինչև բաճկոնների կարելը) Վաճառողը Գնորդին է ներկայացնում նշված գործվածքի բաղադրության, կարգի, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության

	եզրակացություն: Ապրանքների փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, պարկերի վրա պետք է նշված լինեն անվանումները ըստ վերցված անհատական չափսերի, պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինեն ապրանքի անվանումը, քանակը, չափսերը: Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին, նախապես Գնորդի հետ համաձայնեցնելով մատակարարման կոնկրետ հասցեն:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Текстиль Пип в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԳԳ-ԷԱՃԱՊՁԲ-26/08 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
20	Товары изготавливаются в соответствии с критериями и образцами (фотообразцами), утвержденными постановлением Правительства Республики Армения N 1517-А от 20.12.2018г. Куртка (костюм) со съемными погонами (женская) (Фотообразец 7). Изготавливается из темно-синей полушерстяной ткани (67% шерсти, 33% полиэстера, плотностью 317 г/м2, допустимое отклонение: +, - 2%), с натуральной шелковой подкладкой (из артикула 8-С5-ВШ темно-синей ткани плотностью 100 г/м2, допустимое отклонение: +, - 2%), в грудной части с застежками. В передней части куртка (костюм) застегивается с левой стороны, а в поясничной части - вшитой эластической лентой шириной 55 см и длиной 12-18 см. По спинке, бортам переда в области груди и по местам соединения разрезов манжет рукавов проходит тёмно-красная окантовка (кант) шириной 2,5 мм (из суконной ткани 2581 артикула). На куртке (костюме) вшиты 2 боковых кармана застегивающихся на застежку-молнию, внутренние карманы, левый из которых застегивается. На куртке (костюме) расположены по 2 зажима предусмотренные для съемных погонов. Воротник куртки (костюма) стоячий, обработан из одной ткани. На левом рукаве есть шеврон (Фотообразец 20), а на правом рукаве - флаг РА в соответствии с требованиями, установленными указанным постановлением. До изготовления курток (костюмов) цветовая гамма курток (костюмов) согласуется с Покупателем. Полное количество курток (костюмов) должно изготавливаться из одинаковой ткани. При этом, заранее (до шитья курток (костюмов)) Продавец представляет Покупателю выданное аккредитованной в РА организацией заключение лабораторного исследования о составе, категории,

	стабильности краски и поверхностной плотности указанной ткани. Упаковка товаров - в полиэтиленовых прозрачных пакетах, на пакетах должны быть отмечены наименования, согласно взятым индивидуальным размерам, маркированные, на марках должны быть отмечены наименование, количество, размеры товара. Перевозку и разгрузку товаров осуществляет Продавец, за счет своих средств, заранее согласовав с Покупателем конкретный адрес поставки.